

659

Lh-45

33

ՀԵՐ ԵՐ ԵՐ ԵՐ
4-42

ՅԵԼԼԵՐ

ՎԻԼՀԷԼՄ ՏԵԼԼ

Բնագրից ամփոփից

Ս. Թ. ԱՌԱՅԵԱՆՑ



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Կ. Մարտիրոսեանցի տպարան // Тип. К. Мартиросянца

Орбеляновская ул., 7. № 1-2.

1901

3 6 FEB 2013

Дозволено пензуров
Тифлисъ, 18 Мая 1901 года



19573-58

Մէզը ցրուել ենք մռայլ դաշտերից,
Եւ արեգակին ճանապարհ բացել,
Ահարկու ժայռը ջարդել ու փշրել,
Անդունդների վրա ուղիներ շինել....

I.

Աշնանային պայծառ օր էր: Քարձր ապառաժ-
ներով շրջապատած ծովակի ափին կանգնած էր
ձկնորսի խրճիթը: Որքան զեղեցիկ էր նրա շրջա-
կայքը: Ծովակի մի կողմում հրևում էին զիւղեր,
ամրոցներ և կանաչագարդ դաշտեր՝ լուսաւորուած
պայծառ ճառագայթներով, իսկ միւս կողմում տա-
րածուած էին սարերը, որոնց գլուխը ծածկուած էր
ամպով: Քայց աւելի հեռուն երևում էին Ալպեան
բարձրագոյն լեռները սառցապատ գագաթներով: Սա-
կայն այտոեղ ոչ միայն մարդու աչքն էր զմայլում,
այլև խողովածիւնը: Զանազան կողմերից լուծւմ էին
կովերի վզին կապած զանգակների զրնգղընգոցը, որը
առանձին ներդաշնակուածիւն էր կաղմում ղեռահաս
հովիւների և երիտասարդ որսորդների խորհրդաւոր
երգերի հետ: Եղանակը բոլորովին հանդարտ էր և
երկինքը պարզ: Մէկ փոքրիկ ձկնորս նաւակի մէջ
նստած երգում էր.

Ծովակը ժպտալով կանչում է դէպ' ցած,
Փանուկը քնած է ափի մօտ պառկած.

Լսում է նա միայն
Սրնգի քաղցր ձայն,
Եւ հրեշտակային
Երգեր զրախտային:

Եւ երբ նա զարթնում է ուրախ երջանիկ,
Ջրերը կանգնած են նրան շատ մօտիկ:

Եւ ձայն է գալիս
Անդունդի խորքից.
Մանուկ սիրելիս,
Մի փախչիւր ինձնից,
Արի, ներս մտիւր,
Ծոցումս քնիւր:

Հազիւ ձկնորսը լռեց, դեռահաս հովիւր, նստած
մի բարձր տեղում, շարունակեց նոյն զմայլուն մե-
ղեղին, միայն թէ բովանդակութիւնը չարմարացնե-
լով իւր կոչման:

Մնաք բարև, մարգեր,
Պաշտառ արօտներ,
Ամառն անցաւ,
Գնալու ժամն հասաւ:

Գարձեալ մենք կը գանք, սարը դուրս կը գանք,
Երբ կըլուն կանչի, թռչուններն երգեն,
Եւ ծաղիկները դաշտը զարգարեն,
Սիրուն մայիսի վտակները զարթնեն:

Մնաք բարև, մարդեր,
Պայծառ արօտներ,
Ամառն անցաւ,
Գնալու ժամն հասաւ:

Հէնց որ հովիւն ընդհատեց երգը, կարծես թէ նրա հետ մրցելու համար մի մեղամաղձոտ, բայց քաջութեամբ ներշնչուած երգ սկսեց Ալպեան որսորդը, որ նստած էր ապառաժի ծայրին.

Լեռը թնդում է, դետինը շարժում,
Սառցի վրա որսորդը բնաւ չէ տատանում.

Յառաջ է ընթանում
Սառցապատ դաշտով,
Որ բնաւ չէ ծաղկում,
Չէ ծածկում խոտով:

Չէ նշմարում նա ոչ քաղաք, ոչ գիւղ,
Տեսնում է միայն թանձր մառախուղ.

Ամպերի ճեղքից
Հաղիւ որոշում,
Կանանչ դաշտերը
Փռուած ներքևում:

Մեղամաղձոտ երգերի ազդեցութիւնից պայծառ երկինքը սկսեց ծածկուել ամպերով և լեռների մէջ սելի եղաւ ինչոր ահեղ թնդիւն... Ծերունի ձկնորոք դուրս թռաւ խրճթից և որդուն հրամայեց ուռկանը քաշել: Հովիւը հայեացք դրեց իւր հօտի վրա, մի

դուցէ կովերը ցրուած լինին: Անվեհեր որսորդն անգամ բարւոք համարեց թողնել սրածայր ապառաժը և օր-առաջ ներքև իջնել: Ամենքն էլ զգում էին, որ սաստիկ փոթորիկ է լինելու, միայն թէ իւրաքանչիւրն իւր հիմքերն ունէր: Արսորդը նշանակութիւն էր տալիս սառցարանների զղրղոցին և լեռան գլխի մառախուղին: Չկնորսը նկատում էր, թէ ձուկը սկսել է խաղալ և ջրահալը թագնուում է ջրի տակ: Իսկ հովիւն աւելի լաւ փաստ է համարում այն, որ իւր ոչխարները սկսել են աւելի ախորժակով արածել:

Եւ երբ սրանք դեռ քաղցր խօսակցութեան մէջ էին, ահա շնչասպառ վազելով մօտենում է զիւզացի Բաումզարտէնը: Նա խնդրում է ձկնորսին՝ նոյն բոպէին փոխադրել իրան ծովակի միւս ափը, եթէ ոչ իւր կեանքը կ'որած է: Բաումզարտէնը անտառում փայտ է կտրելիս լինում, երբ նրա գեղեցիկ կիւնը վազէվազ գալով յայտնում է, թէ կուսակալը տուն մտնելով կամեցել է բռնութեամբ անպատուել նրան: Բաումզարտէնի արիւնը գլխին է տալիս, բոպէաբար կացինը ձեռին տուն է վազում և կուսակալին տեղնուտեղը սպանում: Այժմ կուսակալի ձիււորները նրա յետքից ընկած կամենում են բռնել նրան, և եթէ նա իսկոյն ծովակը չ'անցնի, կ'որսծ է անխուսափելի կերպով: Տարաբաղդաբար փոթորիկն էլ հետզհետէ սառտկանում է, ծովակը ալեկոծում է սարսափելի կերպով: Չկնորսը շատ կը ցանկանար օգնել նրան, բայց չէ կարող յանձն առ-

նել, պատճառ բերելով, թէ ինքն էլ կին ու երեխաներ ունի, չէ կարող կեանքն ակնյայտնի կերպով ալիքներին մատնել: Որսորդն ու հովիւն աշխատում են համոզել ձկնորսին, որ ազատէ խեղճի կեանքը, բայց չի լինում: Բառւմզարտէնը յուսահատուած է, որովհետև ահա-ահա կը հասնեն ձիաւորները: Բարեբաղդաբար այդ ծանր բոպէին յայտնումէ Վիլհէլմ Տէլլը:

Տէլլը մի քաջ և անվեհեր լեռնական էր, որ շատ նշանաւոր նետաձիգ էր և որսորդութեամբ էր պարապում: Բայց նա քաջ էր ամեն բանի մէջ, ի միջի այլոց լաւ նաւարկող էր: Երբ Տէլլը մօտ գալով իմացաւ Բառւմզարտէնի գրութիւնը, իսկոյն խլեց ձկնորսի նաւակը, թռաւ մէջը և նստացրեց Բառւմզարտէնին: Տէլլը նոյնպէս շատ վտանգաւոր էր համարում այդ փորձը և չը գիտէր, թէ արդեօք պիտի կարողանան ափը հասնել: Այնուամենայնիւ նա աւելի լաւ էր համարում Աստուծոյ ձեռքն ընկնել, քան կուսակալի ճանգը: Բայց նա հայրենակցի պատճառով իւր անձն էլ վտանգի էր ենթարկում, առանց կանգ առնելու, առանց երկար ու բարակ միտք անելու...

Հէնց որ նաւակը հեռացաւ ափից, ձիաւորները տեղ հասան և սկսեցին ձկնորսից ու հովիւից պահանջել, որ տան իրանց մարդասպանին: Բայց նկատելով հեռացող նաւակը, պատասխանատութիւնը զցեցին սրանց վրա և իբր պատիժ որոշեցին աւե-

րակ դարձնել նրանց տունուտեղը և հօտերը ցրուել։
Թողնենք մենք այստեղ այդ չարագործներին
և գնանք տեսնելու, թէ ինչպէս է ազգաբնակու-
թեան դրութիւնը ծովակի միւս կողմում։

II.

Երկու ազնուական գիւղացիներ, Ջտաուֆախէր
և Լիւցէրն, խօսակցում են իրար հետ առաջնի տնից
ոչ հեռու, կամուրջի մօտ կանգնած։ Լիւցէրն խոր-
հուրդ է տալիս բարեկամին փոքր էլ համբերել կու-
սակալական բռնութիւններին, բայց աւտորիական
թագաւորութեան հաւատարիմ լինելու երդում չու-
տել։ Նրա կարծիքով աւելի լաւ է ընդհանուր գեր-
մանական կայսրին հաւատարիմ լինել, քանթէ մաս-
նաւորապէս աւտորիական թագաւորին, որովհետեւ
կայսրը ընտրովի է, կարող է շուտով փոխուել. մա-
նաւանդ որ կայսրի իշխանութիւնը աւելի ձեւական-
անուանական է, քանթէ իսկական։ Լիւցէրնը մնաք
բարև անելով հեռանում է, իսկ Ջտաուֆախէրը
մնում է մենակ և ծառի տակ նստելով ընկնում է
տխուր մտածողութեան մէջ։ Այդ ժամանակ մօտե-
նում է նրա կինը, Քերտրուկան և նկատելով ամուս-
նոյ տխրութիւնը ասում է.

Ինչո՞ւ, իմ բարեկամ, դու գարձեալ տխուր ես.
Քանի որ է արդէն, նկատում եմ այդ ես։

Ի՞նչն է քո ճակատի կնճիւռը շատացնում,
Ի՞նչն է քո պարզ սիրտը ճնշում ու վշտացնում:
Հարազատ քո կինն եմ, մի թագցնիր ինձանից-
Թող, որ ես էլ լինեմ քո վշտին մասնակից:
Աշխատանքդ օրհնուած, գործերդ յաջողակ,
Չտեմարաններդ լի: Չիբրիդ երամակ,
Կովերիդ խմբերը, թողնելով լեռները,
Չմեռելու եկել են իրանց ախոռները:
Առողջ են կովերը, գեղեցիկ՝ ձիերը:
Ահա տես քո տունը, պալատի է նման
Թանգաղին փայտերից՝ մի պատկեր աննման:
Անթիւ լուսամուտներ լոյս են բերում նրան,
Գոյնզգոյն զինադրոշմ ու խօսքեր պատի վրան-
Անցորդը կանգնում է նրանց առաջ զմայլած,
Նայում-գուարճանում մտքի մէջ ընկղմած:

«Տունը գեղեցիկ է — պատասխանում է ամուսինը — բայց նրա հիմքը խախուտ է... Մի քանի օր առաջ նստած էի այս ծառի տակին, երբ կուսակալն եկաւ և տունս տեսնելով յանկարծ կանգ առաւ: Նա հասկացրեց ինձ պարզօրէն, թէ ինքը չէ կարող զիմանալ, որ հասարակ գիւղացին այդպիսի տներ շինէ և պարոնի պէս ապրէ»: Ահասարակ կուսակալը ինչօր թշնամաբար է վերաբերում դէպի Չտաուֆախէրը և փորում է նրա ոտքի տակը: Կինը վազուց է նկատել այդ և ահա թէ ինչ խորհուրդ է տալիս ամուսնուն: «Ասիր, սիրելիս,

չէ որ ես մի փորձառու մարդի ազջիկ եմ: Չատ անգամ հօրս մօտ հաւաքուած էին ժողովրդի զլիաւորները. կարդում էին հին կայսրների մագաղաթեայ հրովարտակնեքը և խելացի խօսակցութեամբ քննում էին երկրի բարօրութեան հարցը: Ես ուշադրութեամբ լսում էի նրանց խելացի խօսքերը և թագցնում էի սրտիս մէջ: Ուրեմն լսիր և ուշ դարձրու լիմ խօսքին: Քեզ սպառնում է կուսակալը, պատրաստ է քեզ վնասելու, որովհետև դու չես թողնում, որ շվէյցարացին մոռանայ իւր ժառանգական իրաւունքները և գերի դառնայ իշխանական տանը: Քեզ պէս են արել և մեր արժանաւոր նախնիները: Եւ ահա վաղուց կուսակալը մտքումը դրել է խորտակել քեզ. կամենում ես դու սպասել, մինչև որ նա իւր չար միտքը իրագործէ: Ամուսնոյ Հարցին, թէ ինչ կարող է անել ինքը, նա պատասխանում է. «Դու գիտես, թէ ինչպէս մեր գաւառում ամենքը զանգառուած են կուսակալի աշահութիւնից և չարագործութիւնից: Քսյց աւելի լաւ չեն միւս գաւառի կուսակալները: Սր չէ անցնում, որ ծովակլի միւս կողմից աղետ սքեր լուրեր չը ստացուին կուսակալների ազօրինի վարմունքի մասին: Ուստի հարկաւոր է, որ բոլոր երեք գաւառներից համախոհները մի խորհուրդ կազմեն և որոշեն, թէ ինչպէս կարելի է այդ լուծից ազատուել: Քաջարի կնոջ խօսքերը վառեցին ամուսնոյ սրտի մէջ այն կրակը, որը վաղուց ծածկաբար պատրաստուած էր բորբոքուելու.

Վտանգաւոր մտքերի փոթորիկ ես բարձրացնում
Գու իմ խաղաղ կրճ.քի մէջ, և իմ հոգւոյ խորքերում
Թագնուած զգացմունքը լոյս աշխարհ ես դուրս բերում:
Եւ այն, ինչ ես վախելով մտքումս էի պահում,
Թեթեւ, անվախ լեզուով դու իմ ականջն ես լցնում:

Ապա նորից ինքն իւր մտքերից սարսելով, նա
աւելացնում է. «Քայց դու լաւ մտածե՛լ ես, ինչոր
ինձ խորհուրդ ես տալիս: Ի՞նչ կարող է անել աշ-
խարհի տիրապետների դէմ մի փոքրիկ խաշնարած
ժողովուրդ: Ահա այդ տունը, որով դու ուրախ ես,
չէ՛ որ կարող է դո՛հ գնալ պատերազմական կրակին»:
Անվեհեր կինը պատասխանում է, թէ ինքը իւր
ձեռքով կրակ կը տայ այդ տունը, եթէ իւր սիրտը
այն աստիճան ստորանայ, որ բաւականանայ միայն
նիւթական-անցողական բարիքներով: Ամուսինը հետ-
զհետէ սիրտ առնելով կնոջ խօսքերից, բացա-
կանջում է.

Նա, որ անկեղծ սիրւում է
Այդպիսի կնոջից,
Վախենալու բան չունէ
Ոչ մի իշխանից:
Եւ պաշտպանուել կարող է
Զօրեղի գէնքից:

Ապա նա որոշում է ճանապարհուել դէպի Ռբրիէ
գաւառը, ուր ունի լաւ համախոհ բարեկամներ:

Հէնց այդ րոպէին նրան Հանդէպ են գալիս Տէլլը
և Քառամգարտէնը, որոնք յաջողութեամբ անցել են
ծովակը: Քառամգարտէնին թագցնելով Չտառ:Փախէրի
տանը, վերջինս և Տէլլը միասին ճանապարհուում են
դէպի Ուրի: Քայց մենք պիտի նրանցից առաջ տեղ
Հասնենք...

III.

Ուրիի գաւառի մի բարձր տեղում կառավարու-
թեան հրամանով բերդ էին կառուցանում: Գործի
վրա հսկում էին կուսակալի վերակացուները, բայց
որմնադիրները և բոլոր բանւորները բուն շվէյցա-
րացիներ էին: Սրանք լաւ հասկանալով, որ այդ
բերդը իրանց միայն վնաս կարող է բերել, գործում
էին բոլորովին ակամայ կերպով: Վերակացուները
իրանց կողմից ամեն կերպ ստիպում ու չարչարում
էին նրանց, որ գործը ըստ կարելոյն շուտ վերջա-
ցնեն: Քայց վերակացուների ստիպողական վերաբեր-
մունքը աւելի զօրեղացնում էր բանւորների կասկա-
ճանքը և անբաւականութիւնը: Որմնադիրներից մէ-
կի Հարցրին, թէ ինչպէս է կոչուելու բերդը, պա-
տասխանում են. «Նա կոչուելու է Ուրի-գսպիչ, որով-
հետև նրա միջոցով պիտի գսպեն Ուրի գաւառի
բնակիչներին»: Այդ խօսքի վրա վարպետներից մէկը
որոշում է իւր գործիքները ծովը զցել: Միւսները

Ճաղրում են բերդը ասելով, թէ որքան բոյներ պիտի միմեանց վրա դարսուին, որ հաւասարուին Ուրիի լեռներից ամենափոքրին: Նրանց խօսակցութեան միջոցին յայտնուում են Ղտաուֆախէրը և Տէլը, որոնց ճանապարհը անցնում էր կառուցող բերդի առաջով: Ղտաուֆախէրը շատ տարակուսում է բերդը տեսնելով, բայց նրա տրտմութիւնը աւելի սաստկանում է, երբ լսում է, թէ Ուրիի դաւառը արդէն լցրել են զանազան բանտերով, որոնց մէջ ընկնողը այլևս լոյս աշխարհ չէ դուրս գալիս: Բայց Տէլը առանց վհատելու մատնացոյց է անում Ուրիի լեռների վրա ասելով, «Ահա ազատութեան շէնքեր, որ ինքն Աստուած է կառուցել մեզ համար, իսկ ձեռքով շինած բերդը ձեռքով էլ կը քանդուի»: Սրանց խօսակցութիւնը ընդհատուում է մօտեցող թմբկահարութեան ձայնից: Իսկոյն յայտնուում են մի քանի ոստիկաններ, բերելով իրանց հետ մի երկայն ձող՝ վրան մի գլխարկ ցցած: Փողովուրդը սկսում է հաւաքուել այդ օտարոտի տեսարանի շուրջը: Ապա մի մուկնետիկ, դառնալով դէպի ժողովուրդը՝ ասում է. «Տեսնում էք այդ գլխարկը, ո՞վ Ուրիցիներ: Նա կախուած կը լինի բարձր սիւնի վրա, ամենաբարձր տեղում. այդ է կուսակալի կամքը և ցանկութիւնը: Գլխարկին պէտք է այնպէս պատիւ տաք, որպէս կուսակալին իրան, այսինքն երկրպագէք գլխաբաց ու չօքած: Սրանով պիտի մարդկանց հնազանդութիւնը չափուի: Իսկ ով այդ հրամանի դէմ մեղան-

չէ, պիտի պատասխանատու լինի իւր անձնով և
ստացուածքով»:

Փողոժուրդը ընդունում է այդ ճառը դառն
ճաղրով: Տէլլը առանց ձայն հանելու՝ կամենում է
անջատուել Ջտաուֆախէրից և զնալ իւր տուն: Ջտա-
ուֆախէրը խնդրում է նրան սպասել խորհրդակցելու
համար, բայց Տէլլը շատ խօսալ չէ սիրում: Ջտաու-
ֆախէրը կասկածելով Տէլլի հայրենասիրութեան վրա,
հարցնում է նրան, թէ արդեօք նա մտադիր չէ
նպաստելու հասարակական գործին: Իսկ Տէլլը խիստ
ինքնուրոյն պատասխան է տալիս.

Տէլլը փրկում է մոլորուած գառնին
անդունդի ծայրից.

Ի՞նչպէս կարող է բարեկամներին
մերժել իրանից:

Բայց ինչ անում էք, արեցէք, միայն
ինձ միք հարցնել,

Ես չեմ կարող ոչ քննութիւն անել,
ոչ հարց որոշել:

Սակայն երբ որոշ գործի համար ես
ձեզ հարկաւորուեմ,


կանչեցէք ինձի և ես ձեր առաջ
պատրաստ կը կանգնեմ:

Ջտաուֆախէրը հասկանում է, որ Տէլլը ոչ թէ
խօսքի այլ բուն գործի մարդ է:

85-573-58

IV.

Մենք գտնուած ենք այժմ Ռուրիի գաւառում, յայտնի գիւղացի Պարտէր Ֆիւրտի բնակարանում: Ֆիւրտը խօսակցում է երկուսուսարգ գիւղացի Մէլիտայի հետ: որը Ունաէրվայդէնի գաւառիցն է: Մէլիտայը իրանց գիւղում գրադուած էր իւր հօր գաշտային գործերով: Մի չնչին սխալի համար կուսակալը մարդ է օւղարկել, որ խլեն նրանց լծկան եղները: Մէլիտայը ընդգլխմացել է ասելով, թէ գութանը չէ կարելի աւանց եղների քարշել: Կուսակալի ներկայացուցիչը պատասխանել է. «Եթէ գիւղացին կամենում է հաց ուտել, թող ուրիմն ինքը քարշէ իւր գութանը»: Այդ խօսքի վրա Մէլիտայը զայրացել է և լաւ ձեռք է ոտրիկանին: Ապա՝ հաւատացած լինելով, որ ինքը պիտի չարաչար կերպով տուժէ, փախել է Ռուրիի գաւառը և թաղանթ է Ֆիւրտի տանը: Սակայն թէ նա և թէ Ֆիւրտը շատ անհանդիստ են, մի գուցէ կուսակալը որևէ վնաս հասցնէ Մէլիտայի հօրը: Ուտի Մէլիտայը կամենում է վերագառնալ, բայց Ֆիւրտը խորհուրդ է տալիս փոքր ինչ սպասել, մինչև մի տեղեկութիւն ստացուի: Եւ ահա հասնում է նրա մօտ Ղտաուֆախերը, որին մենք թողինք նորակառուց ամրոցի մօտ: Ղտաուֆախէրը պատմում է, թէ ինչ ծանր վիճակի մէջ է Մէլիտայի հօրը: Կուսակալը պա-



Հանջել է նրանից, որ անմիջապէս գտնէ որդուն և չանձնէ իւր ձեռը, բայց Հայրը երդուել է, որ ինքը չէ իմանում որդու տեղը: Ուստի կուսակալի հրամանով դաշիճները վայր են գլորել ծերունուն և սուր պողպատներով աչքերը փորել: Կուսակալը խիչ է նույնպէս ծերունու ամբողջ կայքը և բաց է թողել նրան մերկ մարմնով և կոյր աչքերով: Այդ ազետը լսելով Մէլիստալի արիւնը գլխին է տալիս և նա յուսահատ կերպով բացականչում է.

Ոհ ինչ երկնային անգին պարգև է
մեզ աչքի լույսը,

Լուսով է ապրում կենդանի աշխարհ,

մինչև իսկ բոյսը...

Բայց նա պիտի մնայ շրջապատուած միշտ
թանձր խաւարով,

Պիտի չը գմայլէ ոչ կանանչ հովտով,

ոչ ծաղիկներով,

Ո՛չ էլ սառցապատ դաշտերի ցոլուն

ճառագայթներով:

Սարսափելի է բազանց տեսնելու
ապրել աշխարհում,

Մա՛հը ոչինչ է. ինչո՞ւ խղճալով


դուք ինձ էք նայում,

Ես ունիմ երկու ողջ-առողջ աչքեր,

բայց հնար չունեմ,

Որ մէկը համարեմ և իմ խեղճ հօրը

սրտանց նուիրեմ:



Արտացոլում է իմ աչքերի մէջ
լուսեղէն մի ծով,
Քայց այդ ծովիցը մի շող հաղորդել
նրան անգոր եմ:

Արպիսի՛ երկչոտ թշուառական եմ
Ար իմ անձնական ապահով կեանքը
Ի նկատի առած, հօրս յանձնել եմ,
Իբր գրաւական, գազանի ձեռքը:
Երկչոտ զգուշութիւն, էլ ինձնից հեռու,
Ես պիտի դառնամ արեան վրիժառու,
Ես պիտի գնամ՝ խստիւ պահանջեմ
Հօրս աչքերը բիրտ կուսակալից,
Հօր բազուկով դուրս պիտի քարշեմ
Պահապանների բազմութեան միջից:
Ոչինչ չեմ սպասում այլևս կեանքից,
Սիրտս պայթում է անվերջ հուզմունքից:

Ֆիւրստը նկատում է, թէ կուսակալը ապրում
է իւր բարձր ամրոցի մէջ և նրա դէմ Մէլիտայը
աչինչ չէ կարող անել: Իսկ վերջինս պատասխանում է.

Թէկուզ բնակուի բարձր սարերի
Յաւիտենական սառցապատ գլխին,
Սգնութեամբ մի իուժք քաջ ընկերների
Մենք շուտ կը հասնենք նրա դռներին,
Եւ կը խորտակենք հօր ամրոցը:
Քայց թէ կը թեքէք ձեր պարանոցը,

Յանձն առնելով թշնամու լուծը
Եւ եթէ տուն ու տեղի վախիցը
Ոչ ոք չի ուզիլ զալ իմ ետքիցը,
Եւ հովիւներից ժողով կը կազմեմ,
Որոնց սիրտն առողջ ու թարմ է հողին,
Ես նրանց առաջ ազատ կը պատմեմ,
Թէ ինչ սարսափ է տիրում մեր կեանքին:
.

Միթէ մենք բնաւ ոչ մի ոյժ չունենք,
Որ մեր պատիւն ու կայքը պաշտպանենք:
Ինչո՞ւ ենք սովրեւ աղեղը լարել,
Ծանր կացինը արագ տատանել:
Ինչո՞ւ նոյն ինքն անբան կենդանին
Ջէնքին է զիմում լուսահատ ժամին:
Յոգնած եղջերուն մերթ կանգ է առնում
Եւ եղջիւրներով շնեշին սպառնում:
Այժը սեղմելով ժայռին իւր ոտքը,
Հրում է որսկանին անդունդի խորքը:
Գիւղացու ընկեր համբերող եղբ,
Հանդարդ թեքում է լծի տակ վիզը,
Երբ զայրացնումես նրան իգուր տեղը,
Գործի է դնում սուր եղջիւրները,
Նետում իւր տիրոջ զէպի ամպերը:

Մէլխտալը իւր կրակոտ և տանջալի խօսքերով
համոզում է Փիւրստին և Չտաուֆախէրին, թէ այլ-
ևս սպասել չէ կարելի, այլ ժամանակ է, որ Չվէլ-
ցարիալի բոլոր զաւառները ընդհանուր ոյժով թո-

Թափեն իրանցից անտանելի լուծը: Նրանք մի յարմար տեղ են նշանակում լեռների մէջ, ուր երեք գաւառների ժողովրդի ներկայացուցիչները պիտի ժողովեն և իրանց գործունէութեան համար որոշ պայման կապեն:

V.

Մենք գտնուեմենք այժմ Ըվեյցարացի ազնուական Բարօն Ատտինգհաուզէնի տանը: Բարօնը ութսունուհինգամեայ ծերունի է. նա քաղէն ուժասպառ ու դաւամեալ է, ուստի հազիւ է կարողանում անից դուրս գալ: Բայց նա պահել է ղեռ իւր աշխոյժ ու սիրալիր բնաւորութիւնը: Նա շա է սիրում իւր ստորագրեալներին և ի նշան յարգանքի առաւօտեան զինն նրանց հետ միասին է խմում: Բայց Բարօնի մեծ եղբոր որդի Քուդէնսը, որ նրա միակ ժառանգն է, մի տեսակ սառնութեամբ է վերաբերում ղէպի զիւղացի հայրենակիցները և այդ հանգամանքը վշտացնում է ծերունուն, որը հին աւանդութեանց մարդ է և ունի հայրենասիրական խորին զգացմունք: Իսկ Քուդէնսի միտքը փոխուած է: Նա շատ սառն է ղէպի իւր հայրենիքը և փառք ու պաշտօն է որոնում հայրենիքի թշնամիների մօտ: Ահա թէ ինչ խօսքերով է հանդիմանում նրան իւր հօրեղբայրը.

Ախ, Աւլի՛, Աւլի՛, էլ չես ճանաչում,
Մետաքս ես հագնում և սիրամարզի
Թանգ փետուրներով զլուխդ զարդարում,
Մախմարեայ թիկնոց ուսերիդ գցում.
Արհամարանք դէպ՝ զիւղացին տածում,
Անկեղծ ողջոյնը կիսասիրտ առնում:

.

Մմբողջ երկիրը ծանր լծի տակ:
Բռնաւորներին դարցած նահատակ,
Չէ՛ շարժում միայն քո կարծր սիրտը
Հասարակական ցաւն ու վիշտը:
Եւ հայրենիքդ ոտքի տակ տալով,
Թշնամու կողմն ես անցնում խնդալով:
Յոտար իշխանից պաշտօն ես հայցում,
Մինչ հայրենիքդ արիւն է լացում:

Սակայն Բուդէնսն էլ իւր սեփական կարծիքն
ու դադողութիւնն ունի: «Եւ ով է գցել մեր երկիրը
նեղութեան մէջ—հարցնում է նա: Միայն մի խօսք,
մի բառ է հարկաւոր, որ կայսրը նայէ մեզ վրա
ողորմած աչքով: Հարկաւոր է միայն, որ մերօնք
համաձայն են առ միշտ պատկանել Աւստրիական
Թագաւորին և ոչ թէ ձեռականօրէն կայսրից կախ-
ուած լինին: Եւ գ՛ուք, հօրեղբայր, ինչ դեր էք խա-
ղում այստեղ: Մի՛թէ արժէ կառավարիչ և ընկեր
լինել այդ հասարակ զիւղացիներին: Աւելի պատուա-
եր չէ՞ պաշտօն ստանալ Թագաւորից, քան թէ զիւ-
ացիներէ հետ մի շարքում նստել: Սյ՛ո՛, ես չեմ

Թագցնում, որ հոգոյս խորքում ցաւ եմ զգում, երբ օտարները ծաղրաբար անուանում են մեզ *գիւղական ազնուականներ*, մինչդեռ ուրիշ ազնուական երիտասարդները փառքի են հասնում Հաբսբուրգեան դրօշակի տակ: Ես չեմ կամենում այստեղ մնալ և սովորական հասարակ աշխատանքի մէջ կորցնել կեանքիս գարունը: Այդ սարերի միւս կողում փառքի ու պատուի մի աշխարհ կայ, իսկ այստեղ ժանգոտում են իմ սաղաւարտն ու վահանը: Այնտեղ հնչում է պատերազմական թմբուկը, իսկ այստեղ մարդ լսում է միայն հովւական երգերի և կովերի զանգակների միատեսակ ձայնը»:

Բուդէնսի փառասիրական ձգտումները վրդովում են ծերունի Բարօնի սիրտը, և նա պատասխանում է.

Այ՛ն, կուրացած ունայն փառքերից
Կեռ ատիր դու քո ծննդավայրը:
Փախչելով նախնեաց բարք ու վարքերից
Ամօթով լիշիր հարազատ հայրը:
Կը գայ ժամանակ դառն արցունքի՝
Կը զգաս կարօտը քո հայրենիքի:
Եւ այդ հովւական համեստ մեղեդին,
Որ անախորժ է քո թմրած սրտին,
Յտարութեան մէջ յանկարծ կը հնչէ,
Եւ հայրենական վիշտ կը ներշնչէ:
Ո՛հ, գօրեղ է շատ հայրենեաց սէրը,
Չեն գրուել քեզ խորթ աշխարհները,
Եւ կայսերական շքեղ պալատում

Սը Համարես քեզ օտար ու տրտում:
Գնան, վաճառիր քո ազատ Հոգին,
Հլու, հպատակ օտար իշխանին...

Բուզէնսը շարունակումէ նոշանոր պատրուակներ Հնարել իրան արդարացնելու Համար, ի միջի ալլոց նա պնդում է, թէ ինքն ոչինչ չէ կարող յսուաջացնել այդ չնչին հովւական ժողովրդի Հետ և ահա թէ ինչ պատասխան է ստանում.

Դու լաւ ուշ դարձրու այդ հովւ ազգին,
Կուուելու պատրաստ նրա քաջ բաղկին:

Քո արժանիքը, զոհարդ անգին
Մի զօհիր ունայն փառք ու պարծանքին:
Պարագլուխ լինել մէկ ազատ ազգին,
Որը կանչում է քեզ ազերսակին,
Որը պատրաստ է կուուել ու մեռնել,
Ահա թէ ինչն է կոչմանդ վայել:
Բնական ամուր կապերով կապուիր
Հայրենիքիդ Հետ, նրան անկեղծ սիրիր:
Նրա մէջ քո ոյժիդ արմատը փնտրիր,
Օտար աշխարհում միշտ կը տատանուես
Արմատ չունեցող թույլ եղիկնի պէս:

Այդ բոլորի ճշմարտութիւնը գգում է Բուզէնսը սրտի խորքում, թէև չէ կամենում իօստովանուել: Բայց նրան դէպի օտարը մղողը մի բուրբուղին ուրիշ

գորութիւն է, . . . Բէրտա-Փօն-Յրինէկ, աղնուական մի օտարուհի սիրում է Բուզէնսին: Եհա թէ ինչու երկտասարդը զանազան պատրուակներով կամենում է մուսացութեան տալ հայրենիքի շահերը և նուիրուել սինցեղի ծառայութեան, որին պատկանում է Բէրտան: Բայց հարց է, թէ արդեօք Բէրտային հաճելի է այդ:

VI.

Րիւտլիի հովիտը, ուր պիտի գաղտնի ժողով կազմէին երեք գաւառների ներկայացուցիչները գտնուում էր ծովի ափին, և շրջապատուած էր բարձր ապառաժներով և անտառներով: Աէս զիշերը վաղուց անցել էր, բայց պարզ լուսնկայ զիշեր էր: Ծովակը հանդարտ խաղում էր լուսնի ճառագայթների հետ: Հեռւում պսպղում էին բարձր լեռների սուցապատ գագաթները: Երկէն տեղ էին հասել Մէլխտալը և Բաուդգարտէնը Ունտերվալդէնի ներկայացուցիչների հետ և սպասում էին միւսների գալուն: Փոքր յետոյ նաւակով եկաւ Զտաուֆախէրը ձկնից գաւառի ներկայացուցիչների հետ: Մինչդեռ նորեկները զբաղուած էին միւս հայրենակիցներին ողջունելով, Մէլխտալը պատմում է Զտաուֆախէրին, թէ ինչ է կարողացել անել ինքն այն օրից յետոյ, սր բաժանուեց Ֆիւրստի տնից:

Ահ, Զտաուֆախէր, ես տեսայ նրան, բայց նա

ինձ տեսնել չէր կարող: Չե՞ք սրբի նրա կոյր աս-
քերի վրա և նրա հայեացքի հանգած լոյսը լցրեց իմ
սիրտը վրիժառութեան անշէջ կրակով»: Ապա նա
պատմում է, թէ ինչպէս կարողացաւ յաջողացնել իւր
գժուարին ու վտանգաւոր ճանապարհորդութիւնը:

«Սուրէնի սարսափելի լեռների միջով, լայնատա-
րած սառցադաշտերով, ուր միայն արծիւն է սաւառնում
հասայ վերջապէս լեռնային արօտադաշտը: Ճանա-
պարհին յանգցնում էի ծարաւս սառցարանների տա-
կից դուրս հոսող փրփրալի ջրերով: Մենակեաց խրճիթ-
ներում իջևանելով վերջապէս հասայ այն տեղն, ուր
մարդիկ ապրում են խմբական կեանքով: Արդէն
հնչել էր այդ հովիտներում նոր սարսափների ձայնը
և իմ գժբախտութիւնը տրամադրում էր ամենքին
դէպի ինձ և ուրախութեամբ էին ընդունում ինձ:
Ես գտայ, որ այդ շիտակ հողիները վրդովված են
կառավարութեան բռնութիւնների պատճառով:
Նրանք մեկնում էին ինձ իրանց կոշտացած ձեռ-
ները, պատերից իջեցնում էին ժանգոտած սրերը և
երբ ես լիշում էի նրանց մօտ Ֆիւրստի և Չտաու-
ֆախէրի սիրուն անունները, կարծես թէ բոցավառ-
ում էին նրանց ասքերը: Եւ նրանք պատրաստ էին
անել այն, ինչ որ կրցանկանան այդ համակրելի
անհատները: Այդպէս անցնելով զիւղից գիւղ, հիւրա-
սիրութեան հովանու ներքոյ, վերջապէս հասայ հայ-
րենական հովիտը, ուր գտայ հօրս կողոպտուած և
կոյր ասքերով պառկած չոր խոտի վրա: Նա ապ-

բում էր բարի մարդկանց օգնութեամբ: Բայց եւ
լաց չ'եղայ: Թուլասիրտ արցունքներով չըթեթեա-
ցրի ես իմ անբուժելի վիշտը, այլ թաղցրի նրան
սրտիս խօրքում, որպէս մի թանգազին զանձ և
մտածեցի միայն գործի մասին: Եւ սողացի լեռնային
բոլոր անկիւնների մէջ և ոչ մի հովիտ ազատ չը-
մնաց իմ անցելութիւնից: Նոյն իսկ սառցարանների
ստորոտներում գտայ ես մարդաբնակ խրճիթներ և
ամեն տեղ նկատում էի ատելութիւն դէպի բռնա-
ւորները. որովհետեւ նոյն իսկ կեանքի այդ դաժան
սահմաններում, ուր բիրտ երկիրը ոչինչ չէ արտա-
դրում, կուսակալները կողոպտելու բան են գտնում:
Այդ ազնիւ ժողովրդի սիրտը վառեցի ես Հայրենա-
սիրական կայծերով և նրանք ամենքն էլ այժմ
մեզ են պատկանում: Բայց սրանով չըբաւականա-
ցայ... Երկու ամրոց կայ, որոնցից վախում է զիւ-
ղացու աչքը՝ այդ ամրոցներն են՝ Բօսբէրդ և Սարնէն:
Սրանց ապառաժանման պատնէշների ետևում հեշ-
տութեամբ պաշտպանում է թշնամին և վնաս է
բերում երկրին: Ես ուզեցի անձամբ ծանօթանալ
այդ ամրոցների հետ: Ներկայ եղայ Սարնէնում և
բերդը տեսայ: Ես հազել էի ուխտաւորի հազուստ,
տեսայ կուսակալին սեղանի մօտ նստած քէֆ անե-
լիս: Ես տեսայ թշնամուս, բայց չըսպանեցի նրան:
ինքներդ դատեցէք ուրեմն, թէ արդեօք ես կարողա-
նում եմ զսպել ինձ՝ հարկաւոր դէպքում»:

Ղտաուֆախէրը գովում է երիտասարդի անվեհե-

րութիւնը և խոհեմ զգուշութիւնը: Սրանց խօսակցութեան ժամանակ ժայռերից ցած են իջնում, ջահեր բռնած, Ֆիւրատն իւր Աւրեցիներով, որոնց մէջ են մեզ ծանօթ Հովիւր, որսորդը և ձկնորսը: Այժմ ամենքը, թւով երեսուն և երեք հոգի, ի մի են խմբուում: Ֆիւրատը դառնալով դէպի քաջերի այդ խումբը, ասում է.

Այդպէս պիտի մենք հայրենի երկրում,
Սեփական տանը՝ ծածկաբար սողանք,
Որպէս չարագործ զողերն են անգամ,
Ի՞նչ և չունենք մենք ոչ մի ստոր լանցանք:
Եւ կէս զիշերին, որը նենգաւոր
Գործը ծածկելուն է միայն հարկաւոր,
Պիտի ձեռք բերենք մեր իրաւունքը,
Որը պոչմառ է որպէս աստեղքը:

Ապա նրանք անցնում են զործի լուրջ քննութեան: Նախ հարկաւոր են համարում պարզ սրոշել, թէ իսկապէս ինչն է իրանց ցանկացածը: Նրանք մտադիր չեն բռնութեամբ սեփականացնել իրանց նոր իրաւունքներ, այլ պահանջում են միայն իրանց հին իրաւունքները: Զվէյցարացիք հին ժամանակներում ազատ մշակելիս են եղել իրանց լիւնադատները, և բուռն աշխատանքի միջոցով կարողացել են խլել բնութեան ձեռքից իրանց հարկաւոր բնակավայրը: Ապա իրանց ազատ կամքով վճռել են, որ քնդհանուր զերմանական կայրը նուաճուի: Իրանց,

առանց միջամտելու նրանց ներքին գործերին: Եւ այդ հովանաւորութեան փոխարէն նրանք խօստացիլ են իրանց կողմից օգնել կայսրին արտաքին պատերազմական գործերի մէջ: Իսկ այժմ կայսրը, պատահմամբ աւստրիական թագաւորական տնից ընտրուած լինելով, չէ կամենում բաւականանալ գերագոյն ձեւական իրաւունքներով, այլ համարելով ձվէյցարիան իբր մի լաթի կտոր, կամենում է նրանով կարկատել աւստրիական պատառոտած հանգերձր: Սակայն սառցաբնակ հովիւները լաւ են հասկանում, թէ ինչ է նշանակում հայրենիքը գործ դնել կարկատանի համար, ուստի և լսել չեն ուզում այդ մասին: Լեռնական հովիւ սիրտն ու միտքը լաւ է արտայայտում ձտաուֆախերը հետեւեալ խօսքերով.

Այդ երկիրը մենք ինքներս ենք ստեղծել,

Սեփական ձեռքով՝ տոկուն ջանքերով,

Եւ խիտ անտառը մարդաբնակ դարձրել,

Որ միշտ լցուած էր անթիւ արջերով:

Իսկ ճահիճներում վաղուց բուն դրած

Թունաւոր օձի սերմը փչացրել:

Մէզը ցրուել ենք սռայլ դաշտերից,

Եւ արեղակին ճանապարհ բացել,

Ահարկու ժայռը ջարդել ու փշրել,

Անդունդների վրա ուղիներ շինել:

Մեր հազարամեայ անհուն աշխատանք,

Ստարն է ուզում այժմ ժառանգել,

Եւ մեր սեփական սուրբ Հոգի վրա
Մեր ձեռքն ու ոտքը շղթայով կապել:

.

Քայց ոչ, բռնութիւնն էլ սա՛ման ունի:

Երբ հալածուածը էլ մի ճար չունի,

Անտանելի է դառնում նրա բեռը,

Գէպի երկինք է մեկնում իւր ձեռը,

Եւ խնդրում անխախտ իւր իրաւունքը,

Անձեռնմխելի, որպէս աստեղքը:

Խախտուած բնութիւնը վերականգնում է,

Մարդը մարդու դէմ անվախ կանգնում է,

Եւ երբ մի ուրիշ միջոց չէ մնում,

Մերկացրած սուրն է իւր ձեռքն առնում:

Ապա քննելով ապագայ գործունէութեան եղա-
նակը, նրանք զայլիս են այն եզրակացութեան, թէ
նախ պէտք է ձեռք դրել երկու գլխաւոր բերդերը:
Գործը պէտք է յետաձգել մինչև ճննդեան տօները,
երբ ըստ սովորութեան բնակիչները նուէրներ են
տանում կուսակալների համար: Ահա այդ նու-
էր-տանողները պիտի հագուստի տակ թաղցրած
ուռենան որածայր երկաթներ, որոնց հեշտ է յետոյ
ցցել փայտերի վրա և զէնքի տեղ գործածել: Երբ
այդպիսով բերդերի գուռը նրանց ձեռքին կըլլինի,
մօտիկ անտառում թաշնուած ժողովուրդը կըյար-
ձակուի բերդերի վրա: Իսկ բերդերը ձեռք գցելուց
յետոյ բոլոր սարերի վրա պիտի կրակ վառեն իբր
նշան, որ ամին տեղ ժողովուրդը ոտքի կանգնէ

դէնքը ձեռքին: Նրանք յոյս ունին, որ ժողովրդին
զինուորուած տեսնելով կուսակալներն իրանց կամ-
քով դուրս կը գնան երկրից և գուցէ առանց արիւն
թափելու երկիրը ազատուած կըլինի նրանց ձեռքից:
Այդպիսի յոյսերով ներշնչուած նրանք նկատում են,
որ արշալոյսը բացուած է և երկինքը սկսում է
կարմրել և այդ կարմիր լոյսով երգուելով նրանք
հաստատում են իրանց դաշնակցութիւնը: Ապա
սկսում են ցրուել, իրանց հետ տանելով Չտաուֆա-
խէրի նախազգուշական պատգամը.

Այժմ ամեն մէկդ անձայն-անձատուն,
Խաղաղ ու հանգիստ գնացէք ձեր տուն:
Հովիւն թող իւր հօտն պաշտպանէ,
Եւ դաշնակցութեան անդամներ ճարէ:
Ինչ որ լինում է, թողէք զեռ լինի,
Մինչև դանակը ոսկուին հասնի:
Քայց երբոր կը գայ վրէժի օրը,
Պը հատուցանենք նրանց բոլորը,
Հաշիւը կանենք մենք հանդիսաւոր,
Թէ ընդհանրական և թէ մասնաւոր:

VII.

Այժմ տեսնենք, թէ ուր մնաց Վիլհէլմ Տէլլը:
Մի օր Տէլլը կացինը ձեռին զբաղուած էր իւր
խրճիթի կոտորուած դուռը կարգի բերելով, իսկ նրա

որդիները, վալտերը և վիլհելմը բահում նետ էին
ձգում: Յանհարծ վալտերի սիրտը ուզեց երգել և
նա հօր նման նետի սիրահար լինելով՝ երգեց հե-
տևեալը.

Ազեղն ու նետը
Առած իւր հետը,
Լեռն ու հովիտը
Չափէ որսորդը
Վաղ առաւօտը:

Որպէս պարզ օգում
Արծիւն է իշխում,
Նոյնպէս լեռներում
Որսորդն է տիրում:

Ուր նետն է հասնում,
Նրան է պատկանում.
Ով թռչում, վազում,
Նրա գոյքն է կազմում:

Արծիւաների նետաձգութիւնը առիթ տուաւ
Տէւիին և իւր կնոջ մի թեթեւ վիճաբանութեան:
Տէւի կինը չէ ցանկանում, որ իւր փոքրիկներն էլ
ապագայում որսորդ դառնան: Չընայելով, որ
Տէւը շատ փորձառու որսորդ է, այնուամենայնիւ
կինը միշտ անհանգիստ է նրա պատճառով և ահա
թէ ինչ է ասում.

Երբ դու գնում ես, սիրտս դողում է,
Կարծում եմ, թէ չես վերադառնալու:
Իմ աչքի առաջ պատկերանում է,
Իչպէս սառցապատ լեռների միջին
Գու մոլորում ես, ժայռիցը թռչում
Եւ աշնչացած ներքե գլորում:
Կամ թէ կատաղած այծը վայրենի
Անդունդի ծայրին քեզ վայր է հրում,
Կամ թէ ձիւնի շերտն է վերադ թափւում,
Կամ թէ խաբուսիկ սառուցն է փլչուն,
Եւ դու շփոթուծ անդունդն ես թռչում
Ահ ու սարսափով կենդանի թաղւում:

Քայց Տէլլը չէ կարող իւր կոչումն թողնել և նա
այնպէս անխորձ ու անզգոյշ չէ, որ հեշտութեամբ
վտանգի ենթարկուէ:

Ով կամենում է աշխարհքում ապրել,
Պիտի կարենայ կռուել, մաքրուել:
Բնութիւնը ինձնից հովիւ չէ ստեղծել,
Ինձ վիճակուած է գէնքով հալածել...
Միայն նա՛ ունի կեանքի իրաւունք
Ով որ շարունակ նրան ձեռք է բերում:
Ով թարմ հայեացքով իւր շուրջն է դիտում,
Սեփական ոյժին և Աստծուն դիմում,
Նա դուրս է գալիս ամեն վտանգից,
Եւ չէ զարհուրում ոչ մի փորձանքից:

Այդ ասելով Տէլլն գործը վերջացնում է, աղեղը

վերցնում և կամենում է դուրս գնալ: Նա մտադիր է գնալ Ալտորֆ՝ Ֆիւրստի հետ խորհրդակցելու: Վինը լաւ բան չէ գուշակում այդ ճանապարհորդութիւնից, աղաչում է հեռու կանգնել այն շարժումներից, որ սկսած են կուսակալների դէմ: Նա վաղուց նկատել է, որ կուսակալը ծուռ աչքով է նայում Տէլլի վրա: Բայց Տէլլը չէ վախենում նրանից և մինչև անգամ խղճում ու խնայում է նրան.

Ես անցնում էի լեռնային շաւղով,
Վերև կախուած էր ահռելի ժայռը,
Ներքև հոսում էր գետը փրփրալով,
Վտանգաւոր էր ամեն մի քայլը:
Տեսնեմ՝ կուտակալն առաջիս կանգնած:
Երբ տեսաւ ձեռիս աղեղը բռնած,
Ոտքերը դողաց, գոյնը դալկացաւ,
Եւ սարսափելով ժայռին յենուեցաւ:
Իմ խեղճս եկաւ, իսկոյն մօտ գնացի,
Եւ համեստութեամբ «Ես եմ» ասացի:
Բայց նա վախիցը ծպտուն չըհանեց,
Ձեռքի նշաններով՝ գնալ պատուիրեց:

Այդ պատմութիւնը լսելուց յետոյ Տէլլի կինը սկսում է աւելի տարակուսել. նրա կարծիքով կուսակալը չէ մոռանալու այդ սարսափելի բոպէս և աշխատելու է խորտակել Տէլլին, որպէս զի մի անգամ ընդ միշտ հանգստանայ իւր սիրտը: Ուստի Տէլլի կինը խնդրում է, որ նա չը գնայ Ալտորֆ,

քանի դեռ կուսակալը այնտեղ է: Բայց Տէլլը խօսք է տուել և չէ կարող յետ մնալ: Նա ճանապարհ է ընկնում, հետը տանելով մեծ որդուն, որը հօր սիրելին էր և միշտ կամենում էր նրա հետ լինել:

VIII.

Մինչև Տէլլի տեղ հասնելը, մենք տեսնենք թէ ուր մնաց Բուդէնսը, օտարուհու համար հայրենիքից ձեռք վերցնողը: Մենք հանդիպում ենք նրան Ալտգորթի շրջակայ մի անտառում սիրուհու հետ տեսակցելիս: Օրիորդը ասպետական ծագում և սրան համապատասխան բնաւորութիւն ունէր: Նա մասնակցում էր նոյն իսկ ասպետական որսերին: Այդպէս ահա մի օր որսի ժամանակ Բուդէնսը հանդիպեց Բէրտային և խօսք բացեց իրանց ապագայ վիճակի մասին: Բուդէնսը համեստութեամբ նկատեց, թէ ինքը դեռ չէ կարող համեմատուել ուրիշ ասպետների հետ, որովհետև դեռ ոչինչ փառք կամ հռչակ չէ ձեռք բերել, բայց սրա փոխարէն նա ունի մի սիրտ՝ լիքը սիրով և հաւատարմութեամբ: Սակայն երկտասարդը բոլորովին անսպասելի պատասխան ստացաւ ազնւասիրտ օրիորդից.

Ի՞նչպէս կարող էք դուք խօսք բաց անել
Հաւատարմութեան կամ սիրոյ մասին,

Երբ ձեր գլխաւոր պարտքը մոռացել,
Եւ ձեզ ծախել էք օտար իշխանին:
Գերի էք դարձել հարազատ ազգի
Ճնշող, հալածող թշնամու ձեռին:

.
Կայ մի աւելի գեղեցկագոյն բան,
Քան անմեղութեան լինել քաջ պաշտպան,
Ձեր ազգի համար վէրք կայ սրտիս վրան,
Կարեկցում եմ նրան, սիրում եմ նրան,
Որ այնպէս ուժեղ և այնպէս համեստ...

.
Իսկ դուք, որին հէնց ինքն բնութիւնը,
Եւ ասպետական ազնուութիւնը
Ի ծննդենէ պաշտպան է դրել,
Հարազատ ազգը անտէր էք թողել,
Եւ նրա թշնամու կողմն անցնելով
Ձեր երկրի համար շղթաներ կռել:
Ահա թէ ինչու ես Ձեզ չեմ ուզում,
Եւ բարձրութիւնս հաղիւ եմ զսպում:

Օրիորդի խօսքերը խիստ ներգործում են բու-
դէնսի վրա, որի սիրտը իւր հիմքում փչացած չէր: Նա
կարծում էր, թէ Ֆէրտային ստանալու համար ինքն
անպատճառ պիտի աւստրիական կառավարութեան
կողմն անցնէ և այդ անարժան քայլը ի ներքուստ
վշտացնում էր նրան: Ուստի օրիորդի տուած ազնիւ
դասը շատ պատշաճ տպաւորութիւն արաւ նրա

վրա: Նա խօսք առաւ Բէրտայից, որ նա կրմնայ
ձվէցարիայում և նրան կրպատկանէ: Եւ ինքն էլ
իւր կողմից խօսք տուաւ՝ բռւռն եռանդով մասնակ-
ցել հայրենիքի ազատութեան գործին:

IX.

Մենք արդէն տեսանք, թէ ինչպէս նորակա-
ռոյց ամբողջի մօտ մի ձող տնկեցին՝ վրան մի
գլխարկ, որին պիտի ամեն մի անցնող պատիւ տար:
Այդ գլխարկի մօտ երկու պահապաններ էին կանգ-
նած, որոնք շարունակ հսկում էին անցուղարձ
անողները վրա: Նրանք նկատում էին, որ այժմ
շատ քչերն էին անցնում այնտեղով, մինչդեռ մի
ժամանակ նոյն տեղը տօնավաճառի էր նմանում,
այնպէս շատ էր անցուղարձ անողները թիւը: Իսկ
այժմ միայն կորած-գնացած, խեղճ, կիսապուշ մար-
զիկն էին մօտենում ձողին՝ կայսրի հրամանը կատա-
րելու համար: Կամ թէ կանայք ու երեխայք էին
հաւաքուում ձողի մօտ և ծաղրաբանութեամբ պա-
րապում: Ահա այտտեղ հանդիպում ենք մենք Տէլլին
իւր որդու հետ միասին անցնելիս: Հայր և որդի
կողմնակի խօսակցութիւններով էին զբաղուած և
Տէլլը չէր էլ նայում դէպի գլխարկը: Բայց մանուկը
չանկարձ գլխարկը նկատելով, հօր ուշադրութիւնը
շարժեց նրա վրա: Տէլլը քարշելով տղայի թևից

կամենում էր հեռանալ: Նոյն բոպէին ոստիկանները վրա հասան և բռնելով Տէլին՝ կամենում էին դէպի բանտ տանել, առարկելով թէ նա ոտնակոխ արաւ կայսրի հրամանը: Ալտէրը սկսեց լաց լինելով օգնութիւն կանչել և զանազան կողմերից մարդիկ հաւաքուեցին: Եկան նոյնպէս Տէլի բարեկամները և ծանօթները: Սրանք սկսեցին մերթ յորդորել, մերթ խնդրել և մերթ սպառնալ ոստիկաններին, որ բաց թողնեն Տէլին: Բայց ոստիկանները ոչ մի բանի ուշ չէին դարձնում: Եկան նոյնպէս Մէլիտալը և Տէլի միւս խոհակիցները, որոնք կամենում էին ջարդել ոստիկաններին և ազատել Տէլին, բայց Տէլը ինքն ընդդիմացաւ այդ քայլին: Այնուամենայնիւ ոստիկանները սկսեցին աղաղակել՝ «ապստամբութիւն, դաւաճանութիւն...» Ուղիղ այդ ժամանակ վրա հասաւ կուսակալ Գէսլէրը, որը վերադառնում էր որսից իւր պահակախմբի հետ միասին, որի մէջ էին նոյնպէս Բուդէնսը և Բէրտան:

Կուսակալը տեղեկանալով դործին՝ հասկացաւ, որ լաւ առիթ է ընկել ձեռք՝ Տէլին պատժելու համար: Բայց հեռատես իշխանը կամենում էր, որ Տէլի սերունդն էլ բնաջինջ լինի, ուստի զովելով Տէլի ընդունակութիւնն ու ճարպիկութիւնը, հետևեալ որոշումն կայացրեց: Տէլի որդու գլխին պիտի մի խնձոր դնեն, և Տէլը պիտի նետ արձակէ խնձորի վրա ութսուն քայլ հեռաւորութիւնից: Տէլի բարեկամները, ի միջի այլոց Բուդէնսը և Բէրտան,

շատ խնդրեցին կուսակալին, որ մի կողմն թողնէ այդպիսի անգութ պահանջը, որովհետեւ ամենքն հաւատացած էին, որ նետը կըդպչի տղային և կըսպանէ նրան: Տէլլը ինքն էլ շատ խնդրեց: Ֆիւրստը, որ երեխայի մօր հայրն էր, խնդրեց, որ կուսակալը վերցնէ նրա ամբողջ ստացուածքը, միայն թէ փոխէ իւր որոշումը: Բայց կուսակալը անխախտ մնաց: Ուրիշ հնար չկար. հայրը պիտի արձակէր նետը որդու ճակատին: Գործը հեշտացրեց ինքն երեխան, խնդրելով որ հայրը կատարէ, ինչ որ պահանջում են: Ամենզ մանուկը այնքան վստահութիւն ունէր հօր վրա, որ հաւատացած էր, թէ նետը ուղղակի խնձորին կըդպչի: Տղան կանգնեց որոշած տեղում, խնձորը գլխին: Հայրը լարեց ազեղը և նետը տնկեց: Բայց վերջին բոպէին նա հանեց ծոցից մի ուրիշ նետ և լարեց գօտիկի տակը: Ապա նետը արձակեց... և ո՛չ զարմանք. խնձորը վայր ընկաւ, իսկ տղան անվնաս մնաց: Ամենքը զարմացած են և ուրախ: Տէլլը հոգեկան խիտ լարուած դրութիւնից ուշաթափուեց, բայց շուտով կրկին ուշքի եկաւ:

Սակայն կուսակալը այդպէս հեշտութեամբ ձեռք չէր վերցնելու նրանից, ուստի դառնալով դէպի նրան՝ հարցրեց, թէ նա ինչու մի երկրորդ նետ թագցրեց գօտիկի մէջ: Տէլլը չէր կամենում պատասխանել: Կուսակալը խօսք տուաւ, որ եթէ ճշմարիտն ասէ, նրա կեանքին վնաս չի տալ: Այն ժամանակ Տէլլը ասաց. «Եթէ նետը տղային դիպած լինէր,

միւս նետով էլ քեզ պիտի սպանէի»։ Կուսակալը
զարհուրելով այդ պատասխանից, հրամայեց կապել
Տէլլին և տանել նաւը, որով ինքն գնալու էր։
Կուսակալը իբր թէ իւր խօսքը չէր ծռում. Տէլլը
կարող էր բանտումն էլ կեանք ունենալ....

Կուսակալի անդժուժիւնը բոլորովին զայրա-
ցրեց Բուդէնսին և բացեց նրա աչքերը.

Այդքան չար գործեր տեսայ, լռեցի,
Եւ իմ աչքերը դիտմամբ գոցեցի.
Ջգայուն սիրոս բարկութեամբ լցուած՝
Երկար ժամանակ իզուր զուպեցի:
Այսուհետև էլ լռութիւն պահել
Նշանակում է պարզ դաւաճանել,
Ոչ միայն կայսրին, այլ և իմ ազգին:
Իմ արիւնսակից ազգը թողեցի,
Քնութիւնից դրուած կապը քանդեցի,
Եւ դարձայ ձեզի պաշտպան, կողմնակից,
Քայց այժմ քողը ընկաւ իմ աչքից....
Սարսափով զգում եմ, որ ես կանգնած եմ,
Ձեր խորհուրդներով, անդունդի ծայրին.
Իմ ազատ միտքը դուք կաշկանդել էք,
Իմ ազնիւ սիրոյը մոլորեցրել էք:
Քիչ էր մնացել դաւաճանէի
Եւ իմ խեղճ ազգը կորուսանէի:

X.

Բայց մենք բոլորովին մոռացուածեան տուինք ծերունի Բարօն Ատտինգհաուզէնին: Բուդէնսի հեռանալուց յետոյ Բարօնը շատ վհատած էր. նրա ոյժերը օրէցօր սպառուում էին և նա մօտենում էր գերեզմանին: Տէլլի ձերբալալուելուց անմիջապէս յետոյ գտնում ենք Բարօնին հոգեւարքի մէջ: Ներկայ են Փիւրստը, Բաումգարտէնը և ուրիշները: Ի միջի այլոց այնտեղ էր և նետից ազատուած փոքրիկ Վալտերը, որին դեռ չէին տարել մօր մօտը: Բայց մայրը տեղեկութիւն ստանալով պատահած դէպքի մասին, իսկոյն ինքն գալիս է և որդուն լաւ տնտղելուց յետոյ սկսում է գանդատուել թէ՛ Տէլլից, որ որդու վրա այնպիսի վտանգաւոր փորձ է արել և թէ՛ Տէլլի բարեկամներից, որ թոյլ են տուել նրա ամուսնուն տանել: Կինը այլևս յոյս չունի, որ ամուսինը կը վերագառնայ:

Ո՛հ, հայրիկ, դ՛ու էլ զրկուել ես Տէլլից,

Այբողջ երկիրը զրկուել է նրանից:

Մեզ կը պակասի նրա օգնութիւնը,

Իսկ նա կը գգայ մեր կարօտութիւնը:

Նրա ամայի դիտնափոր բանտում

Մխիթարական մի խօսք չէ հնչում:

Իսկ եթէ հիւանդանայ...

Ախ, այն խաւար ու խոնաւ վիրապում
կըհիւանդանայ, գոյնը կըզնայ,
Որպէս վարդ, ծաղկած ազատ հովիտում
Թողմում է իսկոյն ճահճալին հոտում:
Նրա կեանքն էր կազմում լոյս ու արեւը
ձրջում էր միայն պարզ ու թարմ օդում:
Ազատութիւն էր Տէլլը քարոզում...
Ինչպէս պիտ' ապրէ նա այն խոր փոսում:

ձտաուֆախէրը փորձում է լոյս դարթնեցնել
անմխիթար կնոջ սրտում, յայտնելով որ իրանք
աշխատելու են ազատել Տէլլին: Այդ ժամանակ նո-
րից ուշքի է գալիս Ֆարօնը, որին մի քանի ըռպէ
մեռած էին համարում: Հարցնում է նա Բուդէնսի
մասին և պատասխան ստանալով, թէ Բուդէնսը
ալժմ փոխել է իւր ընթացքը, դարձել է դէպի իւր
ազգը, նա մխիթարում է: Ապա նրան աւելի ուրա-
խացնում են բացատրելով, թէ ինչպէս արդէն ըո-
լոր երեք գաւառների մէջ դաշնակցութիւն է հաս-
տատուել և ինչպէս ամեն բան սկստրաստ է թշնա-
ւ լուծը թօթափելու համար: Մանաւանդ ոգ և բր-
ւում է նա լսելով, թէ գործի մէջ ղլխաւոր դեր
խաղացողը գիւղացին է և նա մարգարէական ոճով
ասում է.

Կարողանում է ուրեմն գիւղացին
Առանց դիմելու ազնուականին,
Քլուխ կանգնել իւր փրկութեան գործին,

Լոկ վստահացած սեփական ոչփին:

Կարիք չունի նա մեծերի անուան՝

Կարող ենք հանգիստ մտնել գերեզման:

Առանց մեզ էլ նա կարող է ապրել

Եւ մարդկութիւնը միշտ յառաջ տանել:

Ապա ձեռքը դնելով Վալտէրի գլխին՝ շարունակում է:

Ահա այս գլխին տնկած խնձորից

Ձեր ազատութեան ծառը կը բոսնի,

Հինը կը քանդուի. աւերակներից

Արժանավայել նոր կեանք կը ծլի:

• • • • •

Ազնուականները ամբողջից կ'իջնեն,

Հաւատարմութիւն քաղաքին կ'երդուեն.

Եւ նրա հզօր պատնէշների դէմ

Թագաւորները ուժասպառ կը լինեն:

• • • • •

Ահա իշխաններն, մեծամեծները

Զրահաւորուած յառաջ են գալիս.

• • • • •

Անթիւ, անհամար սուր նիզակները

Գիւղացու տկտր կը ծքին դէմ տալիս:

Բայց ազնուականի ծաղիլը թողմեց

Եւ ազատութեան դբօշը ծածանեց...

Թէ ինչ էր ուզում ասել հոգեվարդի մէջ ազնիւ Բարօնը, մնաց անորոշ... Բայց գոցէ այդ անորոշութիւնը փոքր ինչ պարզում է այն յանգա-

մանքով, որ նոյն ըոպէին շտապով ներս վազեց
Բուդէնսը և հաշտութեան ձեռք մեկնեց այն մարդ-
կանց, որոնց մի ժամանակ արհամարում էր: Ահա
թէ ինչ է ասում նա, Բարօնի դիակի առաջ չոքած.

Այ՛ո՛, թանգագին մարդու սուրբ մարմին,
Խնդրում եմ. լսիր իմ ազնիւ խօսքին.

Օտար կապերը առ միշտ քանդեցի
Եւ իմ հարազատ ազգին նուիրուեցի.
Չվէյցարացի եմ այժմ և յաւիտեան:

Ապա դառնալով դէպի գիւղացիները շարունակում է.

Սուգ արէք, միայն բնաւ մի վախէք.
Նրա սիրտ ու հոգին իմ մէջ կը գտնէք,
Եւ կը վճարէ ձեզ իմ թարմ ձեռը,
Ինչոր պարտ մնաց հանգուցեալ ծերը:
Մի տարակուսէք, երես մի դարձնէք,
Երդումս լսէք, ուխտս յարգեցէք,
Պատանեկութեանս սխալը մոռացէք:

.

Մենք միմիանց կրճ քին պաշտպան կը կանգնենք.
Այդպէս ամենքս էլ զօրեղ կը լինենք:
Սակայն պէտք չէ դեռ երկար խօսակցել,
Մինչ հայրենիքը դեռ չէ աղատուել:
Նախ պէտք է հաղթել, իսկ յետոյ խօսել,
Յետոյ հեշտ կ'լինի միմիանց ներիլ:

Բայց Բուդէնսի սիրտը լիքն է և մասնաւոր
գրակով: Նրա սիրուհին չկայ... Կուսակալը հրամայ-

ել է թաղցնել նրան մի այնպիսի տեղ, որի մասին
Րուդէնսը բոլորովին զաղափար չունի:

Ձեզ խօստացայ իմ աջակցութիւնը,
Բայց նախ տուէք ինձ ձեր օգնութիւնը.
Չկայ իմ Բէրտան, իմ ընտրեալը,
Անչետացել է իմ սիրեցեալը

Օգնեցէ՛ք դուք ինձ, որ փրկենք նրան,
Ոհ, նա սիրում է ձեզ ու ձվէցարեան:

Մենք պիտի բոլոր բերդերը խլենք,
Որոնցից մէկում նրան կը գտնենք:

Մէլիտալը, որը վաղուց ժամանակ է համարում
բացարձակ ոտքի կանգնելու, լսելով Րուդէնսի խնդիրը,
համաձայնութիւն է յայտնում և խնդրում է նրան
նոյն ժամին առաջնորդել իրանց գէպի գործ: Իսկ
Րուդէնսը պատուիրում է միւսներին հետևեալը.

Բայց դուք զինուեցէ՛ք, պատրաստ կանգնեցէ՛ք.
Մինչև լեռներում նշան կը տեսնէք.

Ջուտով կը հասնի ուրախ աւետիք.

Արագ թռչելով, որպէս փոթորիկ:

Հէնց որ նկատէք կրակի բոցերը,

Իսկոյն նետուեցէ՛ք թշնամու վրա

Քարուքանդ արէ՛ք նրա ամրոցները:

XI.

Բայց ո՞ւր տարին Տէլին...

Մենք գտնուում ենք ծովակի արևելեան ափին: Ծովակը սարսափելի կերպով ալեկոծուծ է: Ափին մօտ կանգնած են մի ձկնորս և մի գիւղացի: Աերջինս հեռուից է գալիս և պատմում է ձկնորսին իւր լսածների մասին: Ձկնորսին սաստիկ վրդովում է այն լուրը, թէ Բարօնը հոգևարգի մէջ էր և թէ Տէլին կուսակալը ձերբակալել է և ահա այդ լճի վրա իւր հետ նաւով կիւսնախտ է տանում, որտեղից Տէլին այլևս փրկութեան ոչ մի յոյս չկայ: Ձկնորսը վհատում է բոլորովին և հերոսների կորուստի մէջ տեսնում է երկրի անյուսալի վիճակը.

Տէլը բանտի մէջ, Բարօնը մեռած,
Իէհ, բռնաւորներ, էլ ինչ էք կանգնած,
Ճշմարտութիւնը իսպառ պապանձուած,
Չեզ հսկողների աչքի լոյսն հանգած,
Փրկող բազուկը կապած, կաշկանդած,
Իէհ, գործի անցէք, ամօթը թողած...

Փչէք, քամիներ, խփէք, կայծակներ,
Պայթեցէք ամպիր, թափէք հեղեղներ,
Երկիրը ծածկէք, սերմը փչացրէք:

Վայրենի տարրեր, երկրին տիրեցէք:
Գուք, անապատի բազմաթիւ գայլեր,
Գուք հոգօր արջեր, եկէք, բնակուեցէք,
Չկա՛յ այլևո աղատ Չվէյցարիան,
Չե՛ղ են պատկանում լեռներն Ալպեան:

Բայց բանից երևաց, որ ձկնորսի յուսահատութիւնը հաստատ հիմք չունի: Հաղիւ էր նա խօսքը վերջացրել, երբ նկատեց իւր առաջ կանգնած Տէլլին՝ դարձեալ աղեղը ձեռին և ինչպէս էր կարողացել աղատուել նա....

Կուսակալը նաևով զնում էր Կիւսնախտ և Տէլլին էլ տանում էր: Տէլլը չուաններով ամուր կապոտած և անօգնական ընկած էր նաւի մի անկիւնում: Նա բոլորովին յոյս չունէր երբ և իցէ տեսնելու իւր երեխաներին ու կնոջը և անմխիթար նայում էր ջրային անապատի վրա: Նրա աղեղը նետի հետ միատին ընկած էր նաւի ղեկի մօտ: Յանկարծակի մի այնպիսի փոթորիկ բարձրացաւ, որ բոլոր նաւորդները վհատեցին և յուսահատուեցին: Ճգնաժամի ամենածանր րոպէին ծառաներից մէկը դառնալով դէպի կուսակալը ասում է նրան. «Գուք, պարոն, տեսնում էք թէ Չեր և թէ մեր անելանելի գրութիւնը և որ մենք ամենքս էլ մահու դռանը կանգնած ենք: Նաւարկուները այլևս մի հնար չունին և սարսափից գլուխները կորցրել են: Բայց ահա Տէլլը այստեղ է. նա զօրեղ և նշանաւոր»

նաւարկող է. Բնչ կլինէր, որ նա օգնէր մեզ»։ Կուսակալը դառնալով դէպի Տէլլը ասում է. «Եթէ յոյս ունես, որ կարող ես ազատել մեզ փոթորկից, ես կ'արձակեմ քեզ կապանքից»։ Տէլլը դրական պատասխան է տալիս։ Նրա ձեռ ու ոտը բացում են և նաւի ղեկը յանձնում նրան։ Տէլլը՝ ղեկը վարելով, միւսնոյն ժամանակ աչքի տակով որոնում էր ափի վրա մի այնպիսի յարմար տեղ, ուր կարելի լինէր նաւից դուրս թռչել։ Եւ երբ նկատեց մի ժայռ, որի սուր ծայրը մտած էր ծովակի մէջ, նա հրամայեց նաւը այնտեղ քշել։ Տեղ հասնելուն պէս Տէլլը մի ակնթարթում զերցրեց իւր աղեղը, դուրս թռաւ նաւից և նորից հրեց դէպի ալիքները։ Այդպէս նա ազատուած էր։

Այնուամենայնիւ Տէլլը վտանգաւոր բոպէին ազատել էր նաւը խորասուզուելուց և յոյս ունէր, որ կուսակալը իւր մարդկանցով շուտով դուրս կը գայ Կիւսնախտի մօտակայ ափը։ Ուստի նա խնդրեց, որ ձկնորսը ցոյց տայ իրան Կիւսնախտի ճանապարհը։ Ձկնորսը յանձնեց իւր որդուն, որ Տէլլին տանէ մի կարճ ու գաղտնի ճանապարհով դէպի հարկաւոր տեղը։ Ապա Տէլլը խնդրեց ձկնորսին, որ տեղեկուածիւն տայ նրա կոնջ Տէլլի մասին և ասէ, թէ շուտով մի բան կը լսեն իւր մասին։ Բայց նա չը յայտնեց, թէ ինչ կայ մտքումը. աւելացրեց միայն, թէ գործը կատարուելուց յետոյ խօսք կլինի այդ մասին։

XII.

Տէլլը նստեց ժայռերի մէջ անցնող մի նեղ
շաւղի մօտ, որտեղից կուսակալը անպատճառ պիտի
անցնէր: Մենակութեան մէջ Տէլլը սկսեց ինքն
իրան հաշիւ տալ իւր մտադրութեան մասին.

Ժամդ հասել է, տէր իմ կուսակալ,
Քո Աստուծոյ հետ հաշիւդ արն:
Ես ազրում էի հանգիստ, անմեղ
Քաղաններին էր որսում իմ աղեղ,
Ձեռքս սովոր չէր մարդասպանութեան:
Իմ խաղաղ կեանքից ինձ դուրս հանեցիր,
Կաթնաբուլի սիրտս թունաւորեցիր,
Ահռելի գործին ինձ ընտելացրիր:
Ով նետ է ուղղում որդու ճակատին,
Նա լաւ կը խփէ թշնամու սրտին:

.
Գողգոջուն ձեռքով աղեղը բռնած,
Հարազատ որդոյ ճակատին ուղղած,
Աղբսում էի առաջիդ կանգնած,
Գու նայում էիր անզութ, քարացած:
Այն ժամ ուխտ արի իմ սրտի խորքում,
Եւ սարսափելի կերպ մի երգում,
Որ իմ հետեւեալ արձակուող նետը
Պիտի ծակէ քո զիւային սիրտը:

Եւ այն դժոխային տանջանաց ժամին,
Ինչ որ ուխտել եմ ես սրտիս միջին,
Պիտի կատարեմ Աստուծոյ առաջին:

Գու իմ տէրն ես, փոխանորդ կայսրի,
Քայց կայսրը երբէք այսպէս չէր անլ,
Քեզ ուղարկել է նա այդ երկիրը
Մեր իրաւունքին պաշտպան լինելու,
Ոչ թէ արիւնոռուշտ քո հաճոյքները
Անվախ համարձակ առաջ տանելու:

Ապա դառնալով դէպի իւր նետն ու աղեղը,
Քաջալերում է նրանց:

Հիմա դձուրս արի, գանձդ իմ անդին,
Փորձանքիս պատճառ, ընկեր թանգաղին:
Գու պիտի թուչես դէպի այն կուրծքը,
Որին չը շարժեց իմ աղերսանքը:
Եւ դ՞ու աղեղիս հաւատարիմ լար,
Այս անգամ էլ ինձ մի ընդդիմանար,
Որպէս հնազանդ ես ուրախ ժամերին,
Նոյնպէս էլ եղիր լուրջ վայրկեաններին:
Գու շատ անգամ ես թեւ տուել նետին,
Գիմացկուն եղիր, թուցրու ուժգին,
Թէ նա թուլասիրտ թուչէ քո զրկից,
Չկայ երկրորդը, որ վազէ ետքից:

Մենակ Տէլլը չէ, որ սպասում է կուսակալին:
Մի խեղճ կին էլ իւր երեխաների հետ եկել է և
կտրել կուսակալի ճանապարհը: Վերջապէ՛մ յայտնում

է կուսակալը ճիւղ վրա նստած, և անբաղդ կիներ
փուռում է նրա ճիւղ ոտքերի առաջ, խնդրելով որ
կուսակալը խօսք տայ բանտից ազատել նրա ամուս-
նուն, որը ահա վեց ամիս է, որ բոլորովին անմեղ
կիրպով բանտարկուած է, բայց ոչ քննում են նրա
ղործը և ոչ էլ արձակում են: Իսկ խեղճ կիներ և
երեսխաները անտէր ու անտիրական են մնացել:
Վուսակալը հրամայում է կնոջ հեռանալ, սպառնա-
լով հակառակ դէպքում կոխատել և անցնել: Բայց
յուսահատ կիներ երեսխաներին էլ վայր է դրում և
խնդրում է կուսակալին կամ անցնել իրանց վրայով,
կամ արձակել ընտանիքի հօրը: Վուսակալի ծառա-
ները յետ են մնացել ժայռերի մէջ, որովհետև հար-
սանիքաւորների մի մեծ բազմութիւն ճանապարհը
կտրել է: Վուսակալը դժուարութեան մէջ մնացած,
ինքն իրան զայրանում է, թէ յուսահատ կնոջ և
թէ ամբողջ ժողովրդի վրա....

Ո՛չ, ես տակաւին չափազանց մեղմ եմ
Այդ ազգի համար. լեզուն ազատ է,
Ուրեմն զսպած չէ, ինչպէս ուզում եմ:
Բայց այդ կը փոխուի, խօսքս հաստատ է:
Նրա ամուր կամքը ես պիտի կոտրեմ,
Ազատ ու յանդուզն հոգին պիտ թեքեմ,
Ես պիտի մի նոր օրէնք հնարեմ,
Որպէս զի

Եւ մինչդեռ կուսակալը մի նոր օրէնք էր

Հնարում, անգութ նետը խրուեց նրա կրծքի մէջ...
Նա ձեռքը դրեց վերքի վրա և բայականչեց, «Սա
Տէլլը նետն էր»: Այդ լսելով Տէլլը դուրս եկաւ մօ-
տա՛յն ժայռի գաղաթը և բացականչեց.

Դէհ, ճանաչում ես դու նետի տիրոջ,
Ուրիշին ուրեմն ի՞դուր չորոնես:
Երկիրն ազատ է, անմեղը փրկուած.
Այլևս, կուտակալ, իսպառ անգօր ես:

Տէլլը անշայտանում է: Կուտակալը վայր է
ընկնում և Հոգին աւանդում: Իսկ ժողովուրդը
դբաղուած իւր Հարսանիքով, շարունակում է երա-
ժշտութիւն լսել ու պարել...

XIII.

Ջիւլէրը չէ նկարագրում բուն զինուորական
գործողութիւնները, որոնք տեղի ունեցան երկրի
ազատութեան գործը դլուխ բերելու համար: Եւ այդ
բանը մի առանձին կարևորութիւն էլ չունի: Ուստի
մենք էլ բաւականանում ենք յիշելով միայն ամե-
նակարևոր զէպքերը: Մէլիսալը, որի հօլը կուրա-
ցրել էին, մի անվահեր յարձակում գործելով Բօս-
րէրդ բերդի վրա, վերջրեց նրան: Միւս օրը նա և
Բուդէնսը միացած ոյժերով յարձակուեցին Սարնէն
բերդի վրա, որտեղ ապրել էր կուտակալ Գէսլէրը,

որին Տէլլը սպանեց: Սարնէնը նոյնպէս չը կարողացաւ ընդդիմանալ կրակ կտրած ժողովրդի հարուածներին: Բայց Սարնէնի վերցնելու ժամանակ տեղի ունեցաւ մի սրտաճմլիկ տեսարան, որը սակայն յաջող վերջաւորութիւն ունեցաւ: Բերդը արդէն քարուքանդ եղած էր և հրդեհի մատնուած, երբ հսնդուցեալ կուսակալի ծառաներից մէկը վազելով եկաւ և յայտնեց, որ օրիորդ Բէրտան բերդի մէջն է և արդէն շրջապատուած է բոցերով: Բուզէնսը և Մէլիտայը իրանց կեանքը վտանգի ենթարկելով թռան կրակի մէջ և հազիւ հազ կարողացան դուրս հանել Բէրտային: Հէնց որ նրանք դուրս եկան, իսկոյն ճռճուալով գերանները վայր թափուեցին: Այդ գործողութիւնները տեղի ունեցան զիշերով և դեռ լոյսը չը բացուած՝ երկիրը ամեն տեղ լուսացաւ լեռների վրա վառած կրակներից: Փողովուրդը, թէ մեծ թէ փոքր, ամբողջովին ոտքի վրա էր և ցնծալով ողջունում էր վաղուց սպասուած առաւօտը: Մի առանձին ուրախութեամբ հաւաքուել էր ժողովուրդը կիսատ մնացած ամրոցի մօտ: Հեռուից նկատելով լեռնային կրակները, մեզ ծանօթ բանուորները քարուքանդ արին իրանց ձեռքով կառուցածը: Այդ գործին մասնակցում էին նոյնպէս կանայք և երեխաները: Հէնց այդ միջոցին մի խումբ աղջիկներ բերին երեւելի ձողը գլխարկի հետ և կամենում էին կրակը նետել: Բայց Ֆիւրստի խորհրդով որոշեցին պահել բռնութեան գլխարկը ի նշան

ազատութեան: Նոյն միջոցին եկաւ Մէլիտալը և
Հազորդեց ամենքին վերջնական լաղթութեան աւե-
տիքը և դառնալով դէպի ցնձացող ժողովուրդը՝ ասաց.

Այժմ կանգնած ենք ուրախ ու ազատ
Բռնակալութեան աւերակի վրա...

.

Թող գայ թշնամին իւր բոլոր ուժով,
Նրան կը հալածենք մենք մեծ աշխույժով:
Երբ երկրի ներսից նա դուրս է քշուած,
Զվէյցարիան կը մնայ առ միշտ ազատուած:

Վ Ե Ր Ջ



